№ 67 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13

1895

ՔԱՌԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13 № 67

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱՓԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին հեռագիրները. Մեր հեռագիրները, Օրվայ հարցը. Հայոց հարցը և Անգլիա. Մի մահմէտականի գրուածքը. Վանի նահանգում ձերբակալված խումբը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աւարուիզմ և հոգեւորականներ. Շահլամեանի կոնցերտը. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վիլհելմ կայսրի ճառը. Նամակ Ամերիկայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

—

Կ. Պոլսից ստացած վերջին հեռագիրները, որոնցից մէկը, յունիսի 8-ից, տպագրվեց „Մշակի“ անցեալ համարում, իսկ միւսը, յունիսի 10-ից, տպագրվում է այս համարում,—վերին աստիճանի տխուր մըտածմունքների առիթ են տալիս։

Այդ հեռագիրների մէջ, չը նայած որ խմբագրված են շատ մութ, անորոշ և նոյն իսկ երկչոտ կերպով, պարզ երևում է երկու կէտ. առաջինն այն, որ երեք դեսպանները համաձայնութիւն տուեցին զիջումներ անել և փոփոխութիւններ մտցնել Ծրագրի մէջ, իսկ երկրորդը այն, որ Թիւրքաց կառավարութիւնը ոչ մի կերպ չէ համաձայնվում, որ բարձրագոյն վերահսկողի նշանակելը՝ լինի մեծ պետութիւնների համաձայնութեամբ։ Այդ երկու կէտերն էլ վերին աստիճանի հիմնական են և կարեւոր։

Ընթերցող հասարակութիւնը շատ լաւ յիշում է անկասկած, որ երեք պետութիւնների դեսպանները, ներկայացնելով հայկական բէֆօրմների Ծրագիրը, մի քանի անգամ արդէն յայտարարեցին, որ այդ Ծրագրի մէջ մտցրված են պետութիւնների ցանկութեան minimum-ը և այդ պատճառով ոչ մի զիջում, ոչ մի փոփոխութիւն երբէք չէն կարող անել։

Եւ ահա չանցած նոյն իսկ մի ամիս, երեք պետութիւնների դեսպանները, ենթարկվելով Թիւրքաց կառավարութեան պահանջներին, յայտնեցին, որ համաձայն են վերաքննել Ծրագիրը և մի քանի փոփոխութիւններ մտցնել։ Դա մի մեծ յաղթութիւն է, որ տարաւ Թիւրքաց դիպլոմատիան՝ ստիպելով դեսպաններին յետ կանգնել իրանց խօսքից, որ նրանք մի քանի անգամ յայտնել էին ի լուր աշխարհի, և այն էլ շատ վճռական կերպով. և մարգարէ չը պէտք է լինել դուշակելու համար, որ այդ առաջին յաղթութիւնից ոգեւորված՝ Թիւրքիան կը փորձի երկրորդ յաղթութիւնն անել...

Եւ այդ երկրորդ յաղթութիւնը, անկասկած, կը լինի բարձրագոյն կոմիսարի նշանակելը, որի մասին արդէն ակնարկութիւն կայ Բ. Դրան պատասխանի մէջ։

Մինչդեռ ամբողջ հասարակաց կարծիքը պահանջում է, որ բարձրագոյն կոմիսարը լինի մի բոլորովին անկախ, Թիւրքիայից ոչինչ կախում չունեցող մարդ, Թիւրքիան իր կողմից անտես առնելով այդ կարծիքը, պահանջում է, որ բարձրագոյն կոմիսերի նշանակելու մէջ Եւրոպան բոլորովին չը խառնվի, այլ սուլթանը նշանակի նրան, ում կամենում է։ Վերջին հեռագիրներից երևում է, որ երեք դեսպանները բոլորովին չը վրդովվեցին լսելով Բ. Դրան այդ առաջարկը, որ կը նշանակի թէ նրանք դէմ չեն նոյն իսկ այդ կէտում զիջում անել.—իսկ մի այդպիսի զիջում անել, կը նշանակի թաղել ամբողջ Ծրագիրը...

Աւելացրէք այդ բոլորի վրա և այն, որ իր վերջին պատասխանի մէջ, Բ. Դուռը, սկզբունքով ընդունելով բէֆօրմների կարեւորութիւը, հարկ չէ տեսնում յատկապէս մատնանիշ անել հայերի և հայաբնակ գաւառների վրա, այն ժամանակ հասկանալի կը դառնայ, որ Բ. Դուռը այս անգամ էլ յոյս ունի դօշակի տակ դնել հայոց հարցը, և էլի 17 տարի քնացնել նրան։

Բայց արդեօք Թիւրքաց հայերը կարո՞ղ են քնել։

ՄԵՐ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Մեր Թղթակցից)

—

Մեր Թղթակիցը, յունիսի 12-ից, Պետերբուրգից, մեզ հեռագրում է հետեւեալը.

„Հայոց Կաթողիկոսը պէտք է մեկնի վաղը, յունիսի 13-ին։ Վեհափառի համար պատրիրված է արտակարգ գնացք մինչև Մոսկվա։

„Կառավարութեան պաշտօնական օրգանի՝ „Правительственный Вѣстникъ“-ի մէջ տպագրված է մի մեծ յօդուած՝ հայոց կաթողիկոսների մասին“։

ՕՐՎԱՑ ՀԱՐՑԸ

XI

Նորերս Սըվասի վալին կանչելով իր մօտ քաղաքի մի քանի յայտնի հայերին, սպառնալով ասաց նրանց հետեւեալ խօսքերը.

«Դուք, հայերդ, հանգիստ կացէք, իզուր տեղը մեծ-մեծ յոյսեր մի դրէք Անգլիայի կամ ուրիշների վրա։ Մենք արդէն գիտենք Եւրոպայի հետ վարվելու եղանակը։ Եթէ հարկաւոր լինի՝ Անգլիային էլի մի բան կը տանք, ինչպէս 1878 թվին տուեցինք Կիպրոսը, և այն ժամանակ ձեր բոլորիդ հողին կը հանենք։ Դէհ, գնացէք և խաբար տարէք բոլոր հայերին»։

Թիւրք վալիի այդ խօսքերի մէջ ամբողջ Թիւրքիայի յոյսն է թաղված։ Եւ դա ոչ թէ մի որ և է վալիի, կամ միամիտ մուլէտարիֆի անձնական կարծիքն է, այլ ամբողջ Թիւրքաց կառավարութեան դիպլոմատիական եղրակացութիւնը և յոյսը։

Այդ է պատճառը, որ Թիւրքիան Եւրոպայից չէ վախենում, և համոզված է, որ ամենանեղ րոպէին՝ մի որ և է «բան տալով»՝ դուրս կը պրծնի իր նեղ վիճակից։ Նոյն իսկ 1878 թվին, երբ ռուսաց զօրքերը սպառնում էին ոմբակոծել Կ. Պոլիսը, երբ Իզզէդ-Բեւսքում պատրաստ էին ամբողջ Հայաստանը և ամբողջ Բալկանեան թերակղզին Ռուսաստանին թողնել, միայն թէ Կ. Պոլսում թագաւորէր մահմէտական կիսալուսինը,—նոյն իսկ 1878 թվին, ասում ենք, մի Կիպրոս տալով Անգլիային, Թիւրքիան կարողացաւ Մեծ-Բրիտանիայի վճռական պաշտպանութիւնը իր կողմը դարձնել և դուրս պրծնել օրհասական վտանգից։

Եթէ այն ժամանակ, մտածում է Թիւրքիան, մի Կիպրոսով կարողացայ դուրս պրծնել ամենածանր վիճակից, այժմ, երբ քաղաքական հորիզոնի վրա չը կայ ոչ թնդանօթ, ոչ վառօդ և ոչ էլ ոմբակոծութիւն, այլ միայն «թղթի սպառնալիքներ», այժմ նոյն իսկ Կիպրոսի քառորդը տալով՝ պաշտօնատարներէն պիտի առնուին։ Այս մարդիկն են, որ բարենորոգմանց ճշդիւ գործադրութեանը հեռուէն պիտի հսկեն, ժողովուրդին բողոքը պիտի լսեն և դարմանները պիտի խորհեն և այս մարդիկը, չը մոռնանք, մի և նոյն ատեն բոլորն ալ Թիւրքահպատակ պիտի ըլլան, բոլորն ալ Թիւրքի պաշտօնեայ պիտի ըլլան ու բոլորն ալ սուլթանէն պիտի ընտրուին...։

Մենք առ այժմ չենք մտներ միւս մանրամասնութեանց մէջ, խոստանալով յառաջիկայ առիթով մը խօսել անոնց վրայ, բայց գլխաւոր երեք կէտերը առնելով կը հարցնենք ընթերցողին թէ, գոնէ անոնց մէջ եւրոպական միջամտութեան, եւրոպական հսկողութեան նշոյլն իսկ։ Ծրագիրը կրնար ասկէ աւելի ճոխ պարունակութիւն իսկ ունենալ... թղթի վրայ, և սակայն այդ պարագային մէջ ալ, ինչպէս հիմա, կուտ մը չը պիտի արժէր՝ առանց եւրոպական կոնտրոլի։

Այս ծրագիրը այն ժամանակ միայն կրնայ իրական բարիք մը պարգևել՝ երբ գէթ «բարձրագոյն վերատեսուչը» օսմանեան ծառայութեան մէջ չը գտնուող, անկախ եւրոպացի մը ըլլայ, անկաշառ, ուղիղ մարդ մը, որ միանգամայն վարչական կարողութեամբ օժտուած ըլլայ։

Առէք, օրինակ, Պոսնա-Հերսէկի նահանգը, տեսէք ինչպէս, չատ սուղ միջոցի մէջ աւստրիացի պաշտօնատար մը, պարոն դը Քալէ, երկիրը կերպարանափոխ ըրաւ և տուաւ այնպիսի գեղեցիկ արդիւնքներ, որու վրայ աշխարհ համօրէն զմայլեցաւ։ Եթէ հայկական բարենորոգմունք խեղկատակութենէ աւելի բան մը կարժեն՝ պարոն դը Քալէի նման մարդ մը պէտք է մեզի, առանց որոյ՝ մեր խեղճ ժողովուրդի վիճակը առաւել քան երբէք պիտի վատանայ, և հայերը Թիւրքիոյ երեսէն բնաջինջ ընելու օսմանեան քաղաքականութիւնը՝ այս անգամ ալ Եւրոպայի քթին պիտի խնդայ և իր փճացումի գործը պիտի շարունակէ անարգիլ և անընդհատ։

Հրաչեայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, յունիսի 1-ին

Վերջապէս եւրոպական թերթերը հրատարակեցին հայկական բարենորոգմանց համբաւաւոր Ծրագիրը, որ այնքան խնամով գաղտնի պահուած էր մինչև ցարդ դիւանագիտական շրջանակներու մէջ։

Այդ Ծրագրի մանրամասն վերծանութիւնը ոչինչ բաւականութիւն չի տուեց մեզ դժբաղդաբար, զի ամենէն էական, ամենէն անհրաժեշտ տարրը—եւրոպական հսկողութիւնը—իր բացակայութեամբը կը փայլի հոն։ Ծրագրուած բարենորոգմունք, եթէ կէտ առ կէտ գործադրուելու ըլլան, տարակոյս չը կայ, որ պիտի ունենան բարերար ազդեցութիւն ժողովրդի ընկերական և տնտեսական վիճակին վրա։ Բայց ով պիտի գործադրէ զանոնք։—Թիւրքը... Այո, Եւրոպայի տէրութիւնք միամտաբար Թիւրքին յանձնած են այդ Ծրագրի գործադրութիւնը։

Ծրագիրը կըսէ թէ՝ կուսակալները, որոնք Քրիստոնեայ ըլլան, պարագային համեմատ, մահմէտական կամ քրիստոնեայ ըլլալ, պիտի ընտրուին սուլթանէն կողմէ, բայց իրենց ընտրութիւնը պէտք է եւրոպական պետութեանց հաւանութեան արժանանայ, ուրիշ խօսքով՝ տէրութիւնք վեթոյի իրաւունք ունենան կատարելի ընտրութեանց վրա. կը յանձնարարուի, որ կուսակալք իմացական բարձր զարգացում, վարչական մեծ կարողութիւն և երաշխաւորեալ ուղղամտութիւն ունեցող անձնաւորութիւններէ ընտրուին, քանի որ իրենցմէ մեծաւ մասամբ կախում ունի Ծրագրին բարւոք գործադրութիւնը։ Արդ, մենք որ չատ մօտէն կը ճանչնանք Թիւրքիոյ մահմէտական կամ քրիստոնեայ, քաղաքային թէ գիւղական բարձրաստիճան բոլոր պաշտօնեաները՝ կը դժուարանանք բոլորին մէջէն գտնել գոնէ մէկ անձ մը, որ վերոյիշեալ երեք յատկութիւնները իր անձին վրա միացուցած ըլլայ։ Նախ՝ չատ դժուար է գտնել կրօնական նախապաշարումներէ զերծ, մարդկային հաւասարութեան ու մարդասիրութեան լայն սկզբունքներով օժտուած Թիւրք պաշտօնեաներ։ Ցանցանքը իրենցը չէ։ Մահմէտական կրօնքը երբէք չէ հասած բարոյականի իդէալին, առանց որոյ անկարելի է կանխակալ կարծիքներէ զերծ, անկաշկանդ մարդասիրութիւն ունենալ. յետոյ, բարոյականի հիման վրա դաստիարակութիւն մը չեն ստացած անոնք, ու չեն ապրած մանաւանդ աղնուացուցիչ, բարոյացուցիչ միջավայրի մը մէջ. կաշառակերութիւնը, խարդախութիւնը իրենց ոսկորներուն ծուծը բռնած է՝ պզտիկէն մինչև մեծին մէջ։

Բայց պահ մը ենթադրենք, որ իրենց մէջ բարի մարդիկ գտնուին. անոնց քով ալ մտքի զարգացում, վարչական կարողութիւն անիրականալի բաներ են. մարդ չը կրնար ժպիտ մը զսպել, երբ Թիւրքն ու բարեկարգութեան դաղափարները քով քովի կը տեսնէ։ Դալով Թիւրքիոյ ծառայութեան մէջ գտնուող քրիստոնեայ պաշտօնատարներուն՝ մենք գիտենք, Աստուած ալ գիտէ, թէ այս մարդիկ, Թրքական վարչական մեքենայութիւններու ցանցին մէջ որ աստիճան ապականուած, որ աստիճան գձուձ, չողոքորթ բընաւորութեան տէր մարդիկ են. կրնանք վստահօրէն ըսել, թէ Թիւրքիոյ քրիստոնեայ պաշտօնեաները Թիւրքերէն աւելի ցած, Թիւրքերէն աւելի սոսոր Թիւրքեր են, ինչ ազգի ալ պատկանին։ Իսկ ծրագրի այն տրամադրութիւնը, որով Թիւրք կուսակալներուն առընթեր քրիստոնեայ օգնականներ պիտի նշանակուին ու փոխադարձաբար՝ ոչինչ նշանակութիւն չունի, քանի որ այդ քրիստոնեաներ Բ. Դրան պաշտօնեաներէն պիտի ընտրուին. և մենք տեսանք թէ անոնք ինչ արժէք ունին։

Առնենք ծրագրին երկրորդ կարեւոր կէտը—այսինքն «բարձրագոյն վերատեսուչի» մը անուանումը։ Այդ վերատեսուչի պաշտօնը պիտի տեղ մինչև ծրագրին ամբողջական գործադրութիւնը։ Վերատեսուչը պիտի հսկէ ծրագրին գործադրութեան, բացարձակ իշխանութիւն պիտի ունենայ բոլոր կուսակալներուն վրա, պիտի լսէ ժողովուրդին ցաւերը, տրտունջները, պէտքերն ու պահանջները և պարբերաբար տեղեկագիրներ պիտի հաղորդէ Կ. Պոլսոյ մնայուն յանձնաժողովին։ Մէկ խօսքով, վերատեսուչը երկրին ամենէն զօրաւոր և ամենէն կարեւոր պաշտօնեան պիտի լինի։ Ինքն է որ պիտի ստանձնէ բարենորոգմանց գործադրութեան ընդհանուր պատասխանատուութիւնը։ Ինքն է որ զօրաւոր ձեռքով մը պիտի ջախջախէ բոլոր հինցած, մքլոտած, ապականած դրութիւնները, ինքն է, որ կուսակալներու զեղծումները պիտի երևան հանէ, ինքն է որ դատական անկանոնութիւնները և անիրաւութիւնները պիտի խափանէ, ինքն է որ կիսավայրենի ցեղերու աւարառութեանց և խըժդժութեանց վերջ մը պիտի դնէ. ինքն է վերջապէս, որ աշխարհի ամենէն տառապած ժողովուրդին՝ քարօրութեան, արդարութեան չունչը պիտի տայ հնչել։

Եւ գիտէք, ով պիտի ընտրէ այս կարեւոր պաշտօնատարը—սուլթանը—այն սուլթանը, որ հեղինակը եղաւ Սասունի պատմական ջարդին. և այդ պաշտօնեան պիտի ընտրէ իր հպատակ մահմետականներէն կամ քրիստոնեաներէն, տէրութեանց հաւանութեամբ...։ Եթէ սուլթանը բարութեան տիպար մը իսկ ըլլար՝ ոչն է այն հայ, յոյն կամ Թիւրք օսմանեան պաշտօնատարը, որ կարող ըլլայ այդչափ բարձր, այդչափ պատասխանատու պաշտօն մը յաջողութեամբ գլուխ հանել։

Առնենք Կ. Պոլսոյ մնայուն յանձնաժողովը։ Ասիկա վեց անդամէ պիտի բաղկանայ, երեքը մահմետական և երեքը քրիստոնեայ, բոլորն ալ սուլթանէն պիտի ընտրուին և Բ. Դրան

կարելի է դուրս պրծնել հայոց հարցից, և գուցէ նոյն իսկ ընդ միշտ թաղել այդ հարցը՝ եւրոպական դիպլոմատիայի համար:

Այո, դա Թիւրքիայի համողմունքն է:

Գուցէ այդ համողմունքը սխալ է, գուցէ ամբողջ 17 տարի անցնելուց յետոյ Եւրոպան վճռել է աւելի անկեղծ, աւելի մարդասէր լինել, քան եղաւ 17 տարի առաջ, բայց և այնպէս Թիւրքիայում այն համողմունքն է տիրապետում, որ մի որ և է կտոր հող, կամ մի որ և է ճանապարհ տալով Անգլիային, կամ որ և է խոստում անելով միւս պետութիւններին, կարելի է ամբողջ հարցը չրջել, և մի բոպէում թաղել այն բոլորը, ինչ որ այսօր առաջ է բերում աղմուկ, յուզմունք և նոյն իսկ սպառնալիքներ...

Ահա այդ է պատճառը, որ Թիւրքաց կառավարութիւնը, մութէսարիֆից սկսած մինչև մեծ վիզիրը, ոչինչ երկիւղ չեն տեսնում Եւրոպայի կողմից, ձգձգում են իրանց խոստումները, չեն պատասխանում դեսպանների յայտագրերին, ըստ պատասխանում են հեգնական ժպիտներով, այսօր վաղն են գցում, և նոյն իսկ հարցի ամենասուր ժամանակը ամենակոպիտ կերպով վիրաւորում են եւրոպական քննիչներին, սպանում են քրիստոնեայ հիւպատոսներին և այլն և այլն...

«Եթէ հարկաւոր լինի՝ էլի մի բան կը տանք Անգլիային և յետոյ ձեր բոլորիդ հոգին կը հանենք».—այդ խօսքերը, ճշմարիտ է, շատ վիրաւորական են ամբողջ Եւրոպայի համար, բայց ինքը Եւրոպան է ներշնչել Թիւրքիային այդ համողմունքը:

Իսկ Եւրոպայի մեղքը քաւում է Թշուառ Հայաստանը:

Խ. Մալումեան

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

Նորերս անգլիական միջերկրական նաւատորմը, բաղկացած 20 նաւերից և 8000 զինուորներից, հրաման ստացաւ Զմիւռնիա ուղևորվել: Այդ ծովային ցոյցը պէտք է Թիւրքիային վախեցնելու մի միջոց լինի հայոց հարցում: Անգլիան սպառնում էր նրան իր նաւատորմով փոքր-Ասիայի ափերի վրա, և եթէ սպառնալիքը չօգնէր, այն ժամանակ նաւատորմը, ինչպէս հաղորդում է Լօնդօնի մամուլը, կը գնար Բէզիկի ծոցը, և այդպիսով խարիսխ կը գցէր Կ. Պոլսին ամենամօտ տեղում:

Այսօր հեռագիրը Կ. Պոլսից հաղորդում է, որ անգլիական նաւատորմը գնաց դէպի Կրիտէ կղզին: Դեռ ևս յայտնի չէ, թէ ինչ է նշանակում անգլիական նաւատորմի կանգնելու տեղի այդ փոփոխութիւնը,—արդեօք յետ է կանգնում անգլիական դիպլոմատիան, թէ առաջ է գնում և կամենում է իրագործել վաղուց յայտարարված սպառնալիքը, որից յետոյ պէտք է յարձակողական գործողութիւններ սկսվեն: Եւ որովհետև անգլիական նաւատորմը, գնալով դէպի Կիպրոս, հեռանում է Զմիւռնիայից, և մանաւանդ Կ. Պոլսից՝ բաւական մեծ տարածութեամբ, կարելի է այն եզրակացութեան գալ, որ Անգլիան աւելի լաւ է համարում յետ քաշվել, կամ գոնէ մի առ ժամանակ յետաձգել իր մտադրութիւնը՝ յարձակողական գործողութիւններ սկսելու Թիւրքիայի դէմ:

Այդ յանկարծակի փոփոխութիւնը անգլիական քաղաքականութեան մէջ, ըստ երևոյթին, կապ ունի սուլթանի պատասխանի հետ՝ հայոց հարցի առիթով: Թիւրքաց կառավարութիւնը համաձայնվում է, եւրոպական պետութիւնների հետ միասին, քննութեան առնել Թիւրքաց հայերի գործը, բայց նա իր կողմից պահանջում է, որպէս զի պետութիւնները միաժամանակ լուծեն և եգիպտական հարցը:

Այժմ Եւրոպան, երևի, մի փոքր կը հանգստանայ հայոց հարցից, որը, իսկապէս, շատ քիչ էր վերաբերվում նրան: Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, անգլիական դեսպանը դիտաւորութիւն ունի առաջարկել իր կառավարութեանը «մի առ ժամանակ յետաձգել հարցի լուծումը»: Այդ փոփոխութիւնը բացատրվում է նոր մեծ վիզիր Սաիդ-փաշայի պաշտօն ստանձնելով. Սաիդ-փաշան իբր թէ հաւատ է ներշնչում անգլիացիներին, կամ շատ կարելի է՝ երկիւղ: Շատ հաւանական է, որ նա կը վերանորոգի կիւր: Շատ հաւանական է, որ նա կը վերանորոգի և կը բարւոքի վարչութիւնը հայաբնակ վիլայէտներում, բայց մի և նոյն ժամանակ չի թոյլ տայ Անգլիային իշխել Թիւրքիայում, որպէս իր կոլոնիայում: Ռուսաստանն ևս չի թոյլ տայ, որպէս զի հայերը գործիք դառնան մեզ թշնամի անգլիական քաղաքականութեան, դէպի որը առաջատար հայերից շատերը, ըստ երևոյթին, շատ տրամադիր են:

Մեզ թվում է, որ անգլիական քաղաքագէտները շատ խախուտ ենթադրութիւն են անում, հաւատացնելով, որ Ռուսաստանը և Ֆրանսիան եթէ չեն մասնակցի Մեծ-Բրիտանիայի յարձակողական գործողութիւններին եւրոպական Արևելքում, գոնէ արգելքներ չեն յարուցանի:

Անգլիացիները, անկասկած, չեն հոգում հայերի համար, որոնց նրանք չեն ճանաչում և դէպի որոնց միանգամայն անտարբեր էին վերաբերվում շատ դարեր շարունակ. նրանց նպատակն է նոր նուաճումներ անել, իսկ այդ դէպքում նրանք կը հանդիպեն Ռուսաստանի և Ֆրանսիայի կտրական դիմադրութեան:

«Нов. Время»

ՄԻ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԻ ԳՐՈՒԱԾՔԸ

Անգլիական «The Nineteenth Century» ամսագրի յունիսի համարում Հնդկաստանցի մի մահմետական, Ղուլամ-Ռաս-Սաքլեն անունով, տպագրել է մի յօդուած, որ կրում է հետևեալ վերնագիրը. «Հնդկաստանի մուսուլմանները և հայոց հարցը:»

Յօդուածագիրը այն մուսուլմաններից է, որոնք ընդունում են եւրոպական քաղաքակրթութիւնը և ցանկանում են, որ մահմեդական աշխարհը լուսաւորվի. սակայն նրա դատողութիւնները դեռ խակ են և ցոյց են տալիս, որ հեղինակը Բոսֆորի իմաստունների լոգեկայից շատ էլ հեռու չէ գնացել...

Խօսելով օրինակ, Փոքր Ասիայում տեղի ունեցած դաղանութիւնների և անիրաւութիւնների մասին, հեղինակը բացագանչում է. «միթէ ուրիշ երկիրներում տեղի չունեն նոյնպէս չարագործութիւններ, իրաւունքների խախտումներ:» Այնպէս որ, փոխանակ եղած անիրաւութիւնը ուսումնասիրելու և նրա դէմ բողոքելու, հեղինակը աշխատում է նրա նշանակութիւնը թուլացնել՝ ուրիշ անիրաւութիւնների օրինակներ բերելով:

Յօդուածի հեղինակը ուզում է ապացուցանել, որ Անգլիան պէտք է զգոյշ վարվի մահմետականների զգացմունքների հետ և այնպիսի անողոք ու կատաղի կերպով չը բողոքի մահմեդականութեան դէմ, ինչպէս այդ տեղի ունի ներկայումս Անգլիայում, հայկական սարսափների առիթով:

Անգլիան—ասում է մահմեդականը—աշխարհիս ամենամեծ մահմեդական պետութիւնն է, աւելի մեծ, քան Թիւրքիան և Պարսկաստանը: Անգլիան ունի աւելի քան 57 միլիոն մահմետական ժողովուրդ, որոնց մեծ մասը գտնվում են Հնդկաստանում: Մահմեդականների մէջ արդէն սկսվել է շարժում դէպի լուսաւորութիւն: Շնորհիւ Ալիգարհում հաստատված անգլօ-արևելեան բարձր մահմետական դպրոցի, աւելի քան 300 մահմետական ուսանող ստանում են կանոնաւոր կրթութիւն և ապագայ առաջադիմութեան հոդ են պատրաստում: Այդտեղից դուրս եկածները արդէն ցրվել են Հնդկաստանում և դպրոցներ են բացանում երկրի զանազան մասերում: Նրանք հրատարակում են հարիւրաւոր լրագիրներ տեղական լեզուով և գրում են բազմաթիւ գրքոյկներ, որոնք տարածում են առաջադիմական հոսանք դէպի ամենահեռաւոր անկիւնները: Մահմեդականների մէջ երևացին այնպիսի աչքի ընկնող գրողներ, ինչպէս Սիեդ Մահմուդը, իբրև իրաւաբան և օրէնսգէտ, ինչպէս Զուտիս Ամիր Ալի, «Spirit of Islam»-ի նշանաւոր հեղինակը:

Հնդկաստանի մուսուլմանները սաստիկ վիշտ են զգում, որ հայկական սարսափների պատճառով անգլիական ազգը այնքան կծու լեզու է բանեցնում մահմեդական տարրի դէմ: Գլադստոնի նման նշանաւոր անձինք այնպէս են խօսում մահմեդականութեան դէմ, որ կարծէք թէ միջին դարերումն ենք ապրում: Մինչդեռ քրիստոնեայ չը լինելը չը պէտք է պատճառ լինի անողոք յարձակումների: Հարցի կենտրոնը պէտք է տեղափոխել ուրիշ կէտի վրա և կրօնական կամ ցեղական տարբերութիւնների վրա չը պէտք է հիմնել նրան:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԽՈՒՄԲԸ

Մենք արդէն տպագրեցինք Թիւրքաց կառավարութեան մի պաշտօնական զեկուցումը այն մասին, որ Վանի նահանգում, սահմանի վրա, ձերբակալվել են 14 հոգուց բաղկացած մի խումբ հայեր:

Անգլիական «Morning Post» լրագիրը հաղորդում է հետևեալ ոչ-պաշտօնական մանրամասնութիւնները այդ զինված խմբի մասին:

«Մի քանի հայ, զինված հրացաններով, փորձեցին անցնել սահմանը, բայց կալանաւորվեցին:

«Այդ խմբի առաջնորդը ամեն կերպ աշխատեց, որ իրան ներկայացնի իբրև անգլիական հպատակ և Լօնդօնի լրագիրների թղթակից, բայց չը կարողացաւ համոզել Թիւրք պաշտօնեաներին և, վերջապէս խոստովանվեց, որ ինքը հայ է, Ախակցի (?), որ երեք տարի սրանից առաջ նա գնացել է Անգլիա և միացել յեղափոխական «Հնչակ» ընկերութեան, և գնել է Մարսէյլում 3000 հրացան՝ Թիւրքիա մտցնելու համար: Նա աւելացրեց, որ անգլիական թղթակից ձևանալով, յոյս ունէր երկիրը մտնել և օգնել հայերին:»

Այդ խմբի ձերբակալութեան մասին հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները: Խումբը իջնում է սահմանգլխի մի եզիդի գիւղում, ուր, տարաբաղդաբար, այդ նոյն միջոցին իջևանած են լինում Թիւրք հարկահաւանները. գիւղացիներից մի քանի անձինք յայտնում են Թիւրքաց հարկահան պաշտօնեաներին այդ խմբի մասին: Թիւրք պաշտօնեաները պատում են առնը, ուր իջևանել էր խումբը և բոլորին կալանաւորելով, մեծ հսկողութեան տակ տանում են Վան:

Դեռ մինչև այժմ էլ քանտումն են: Վանի անգլիական հիւպատոսը պատուէր է ստացել, ստուգելու թէ ինչ մարդիկ են դրանք: Ցոյս կայ, որ շուտով ազատվեն նրանք բանտից, որից յետոյ հաւանօրէն կը հեռացվեն երկրից:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

«The Galignani Messenger» լրագիրը յունիսի 4-ի համարում տպագրել է մի հեռագիր, Կ. Պոլսից, որի մէջ յայտնված է, որ Բարձր Դուռը խոստացել է բրիտանական, ֆրանսիական և ռուսական դեսպաններին բաւարարութիւն տալ այն վիրաւորանքի համար, որ քննիչ յանձնաժողովի եւրոպական անդամներին հասցրեց Թիւրքական ոստիկանութիւնը:

II

Գրօսվենօրհաուս կոմիտեի քարտուղար Մալկոլմ Մակկոլ մի նամակ է գրել անգլիական «Times» լրագրի խմբագրին, որով յայտնում է, թէ սխալ է Փոքր Ասիայի քննիչ յանձնաժողովը անուանել միջազգային, ինչպէս այդ անում են անգլիական լրագիրները: Դա մի թիւրքական յանձնաժողով է, որի միջոցով սուլթանը ցանկանում էր հեռացնել հայ աւազակների արարքը: Ընդհակառակը սուլթանը թոյլ չը տուեց, որ միջազգային քննիչ մարմին կազմվի:»

III

Լօնդօնից «Новое Время» լրագրին հեռագրում են. «Անգլիական «Daily News» լրագիրը ստորագրութիւն բացեց յօգուտ հայերի: Բոլոր փողերը, որ կը ստացվեն վերոյիշեալ խմբագրութեան մէջ, կը յանձնվեն անգլօ-հայկական ընկերութեանը: Այդպիսով մինիստրական օրգանը նպաստում է ագիտատորներին, որոնք մինչև այժմ պնդում էին, թէ իրանք ոչինչ յարաբերութիւններ չունեն անգլիական կառավարութեան հետ:»

IV

Անգլիական «Times» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ Վիէննայի քաղաքագէտների կարծիքով, Կ. Պոլսում տեղի ունեցած վերջին փոփոխութիւնները հետևեալ կերպով են բացատրվում: Նոր մեծ վիզիր Սաիդ-փաշան մեծ հեղինակութիւն է վայելում մահմէտական աղգաբնակութեան մէջ: Սուլթանը մահմէտականներից համարեա նոյնքան է վախենում, որքան և քրիստոնեաներից: Աւստրիական կառավարութիւնը հայոց հարցում շատ զգոյշ ընթացք է բռնում: Նա ամենից շատ է վախենում, որ հայոց հարցը ընդարձակ չափեր չընդունի: Այդ պատճառով աւստրիական կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում որոշ սահմանների մէջ դնելու այդ հարցը:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼՏՐՈՒԻԶՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

II

Ամեն մի բեժիմ, որը փոքրամասնութեան շահերին է ծառայում և արդարութեան ու գիտութեան փոխարէն կամայականութեան ու նախապաշարմունքի վրա է հիմնված՝ արդէն ինքն իր մէջ կրում է քայքայման ու մահվան կնիքը, որովհետև վնաս է հասցնում մեծամասնութեան՝ ժողովրդի բարօրութեան:

Միջնադարեան անճնիչխան, անսխալական պապականութիւնը՝ իր կղերի բարոյական այլանդակութեամբ, անթիւ խարդախութիւններով և ճնշող ինկվիզիցիայով՝ միայն արագացրեց իր անկումը և առաջացրեց ռէֆորմացիան: Այժմեան Թիւրքիան իր կամայական անկարգ վարչութիւնով մահուան դուռը հասաւ, ինչպէս և Չինաստանը իր դատարկ, ինքնահաւան հնամոլութեամբ և անշարժութեամբ:

Հին-Հայաստանն էլ, իբրև մի ասիական բընակալական երկիր, բուն ժողովրդի սէրն երբէք չէ գրաւել դէպի բեժիմը, որովհետև ամեն ինչ այնտեղ յօգուտ իշխանական և հարուստ դասակարգի էր: Միայն քրիստոնէութիւնը իր հաւասարասիրութեամբ, աղքատների և զրկվածների պաշտպան հանդիսանալով՝ սկիզբը դրեց ժողովրդական իրաւունքների հարցին.—եկեղեցին հաւատացեալ ժողովրդի համագումար դարձաւ, ընտրութիւններով և ժողովներով սկսվեցին վճռել շատ ընդանուր խնդիրներ, որոնք կապված էին եկեղեցու հետ. ժողովրդի ձայնն էր որոշում սպասաւոր կղերի վիճակը և առաջարկութիւնը: Հոգևորականներից արժանաւորագոյնները ժողովրդի կողմնակից էին. Ներսէսները, Սահակները, Խորենացիներն ու Փարպեցիները ժողովրդի լուսաւորիչ և զրկված դասի պաշտպան հանդիսացան. ժողովրդին ազատելու համար կղերի միակ մեկնիչ լինելու մեծամիտ ձգտումից՝ նրանք տուին ժողովրդի ձեռքը նրա մայրենի լեզուով թարգմանած աւետարանը. անհաւասարութեան զրկանքներից ազատելու համար աղքատ ժողովրդին՝ նրանք վանքերում բաց արին դպրոցներ, անկեւանոցներ, հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ:

Բայց, դժբաղդաբար, այդ լուսաւոր, մեծ անձանց թիւը շատ քիչ էր դիմադրելու համար ազէս, չահասէր և ֆանատիկոս աբեղաների ահագին բանակին, ուստի նրանց վիճակն եղաւ՝ հալածվել: Աբեղաների մեծ մասը քրիստոնէական ոգուն բոլորովին հակառակ ընթացք էր բռնել և քաղդէերէական ու կռապաշտական ծէսերի և նախապաշարմունքների մէջ էր փնտռում կրօնը: Վանքերից, ուր ագիտութիւնը և արծաթասիրութիւնը առաքինութիւն էր ճանաչված, հալածվելով հալածվեցին Խորենացիներն ու Փարպեցիները: Ժողովրդի լուսաւորութեան և բարեգործութեան համար չինված վանքերը, իրանց ընդարձակ կալուածներով, աբեղաների անձնական սեփականութիւն էին դարձել. նրանք յափշտակում էին ազգի սեփականութիւնը՝ գանձ դիզելու և աշխարհական ազգականներին հարստացնելու նպատակով: Հոգևորական աստիճանը սակարկութեամբ վաճառվում էր դրամով. ժողովրդի ընտրութիւնը խախտված էր: Շրջիկ աբեղաների «նուիրակութիւններով» կեղեքվում էր ժողովուրդը յօգուտ պորտաբոյծ, ծոյլ, տգէտ միաբանների: Հոգևորականութիւնը ժողովրդի ագիտութիւնը և միամտութիւնը դարձրել էր հարստահարութեան անսպառ աղբիւր. դժոխքի արհաւիրքներով ու սատանաներով վախեցնում էին նախապաշարված ժողովրդին, իրանց դրպանների համար նուէրներ կորզելու նպատակով: Աւետարանի լայն, ալտրուիստական ոգին քարոզելու փոխարէն նրանք գրգռում էին կատաղի ֆանատիկոսութիւն և թշնամութիւն դէպի այն մարդիկ, որոնք այնպէս չէին հասկանում բարոյականութիւնը, ինչպէս հաճելի էր ազէտ աբեղաներին: Հարստահարված, ճնչված ժողովրդին մարդկային իրաւունք քարոզելու փոխարէն հոգևորականները ստրկամտութեան և բռնութեան խնկարկողներ էին և անիրաւութիւնների սրբագործներ:

Եւ ժողովուրդը միշտ տեսնելով ագէտ, մոլեռանդ, չահասէր և ստոր մարդիկ հոգևո-

բական պաշտօնի մէջ՝ կամաց-կամաց սովորեց նրանց վնասակար համարել և առաջնորդում արհամարհել ու ծաղրել։ Չը նայելով դրան, երբ երևան է գալիս մի ազնիւ, լուսաւոր և գործով ժողովրդասէր հոգևորական՝ ժողովուրդը, չը լսելով կղերի մեծամամնութեան չարախօսութիւններին, յարգում, պաշտում էր այդպիսի անձանց։ Ժողովուրդն իր առողջ դատողութեամբ միշտ լաւն և արդարը վաղ թէ ուշ հասկանում է։ Կարբեցու բոլոր ստոր, կեղտոտ միջոցներն անզօր էին վայր գցելու Աչտարակեցու ժողովրդականութիւնը հասարակութեան լուսաւոր և առաջադէմ մասի աչքում. ժողովուրդը գործերով է գնահատում իր անունից խօսողներին։

Մարակոզ մամուլ չը կար Կարբեցու ժամանակ, բայց համոզվելու համար թէ ինչ անարդ, ընկած վիճակի էր հասել ժողովրդի աչքում էջմիածինը իր անարժան հոգևորականութիւնով, թող մեր խաւարամիտները կարդան Ա. Երիցեանի վերջին պատմական աշխատութիւնները, որոնցից դուցէ շատ և շատ բաներ ուսանեն...

Ժողովուրդն իր օգուտը լաւ է հասկանում. նրան կարելի է սուտ ու խաբուսիկ բաներով մոլորեցնել միայն կարճ ժամանակով, նրա ուշադրութիւնը հեռացնել իր վերքերից կարելի է միայն վայրկենաբար, բայց նա շուտով հասկանում է ճշմարտութիւնը և կրկին վերադառնում իր վերքերին և այնուհետև ոչ մի չանտաժային, եղուխական կամ փարիսեցիական աչքակապութիւն չի օգնի. կղերը կամ պէտք է գոհացում տայ ժողովրդի դրած պահանջներին և բարեփոխվելով դառնայ ժողովրդի վերածնութեան գործօններից մէկը, կամ... արհամարհվելով մոռացվի ժողովրդից և պապական կղերի վիճակին հասնի։

Մեր դարում անճնիշխան կամայականութիւնը և մեծամիտ տգիտութիւնը անպատիժ չեն անցնում, ինչպէս և չեն անցել երբէք։ Այժմեան հասարակական կարգերի իդէալը le peuple souverain-ն է։ Առաջադիմութեան յաղթական ընթացքում փչրվում, ոչնչանում են այն ամենը, ինչ որ անհամապատասխան է արդարադատութեան և գիտութեան պահանջներին։

L.

ՇԱՀԼԱՄԵԱՆԻ ԿՕՆՑԵՐՏԸ

Շաբաթ, յունիսի 10-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում տեղի ունեցաւ տենօր Ն. Շահլամեանի կօնցերտը, մասնակցութեամբ օրիորդ Սորախօվայի և տիկին Բոդրիցկայի։

Մեր հասարակութիւնը, որին լաւ ծանօթ է Շահլամեանի զօրեղ ձայնը, այս անգամ էլ հետաքրքրված էր այն հարցով, թէ որչափ առաջադիմութիւն է արել երգիչը վերջին տարիների ընթացքում։

Ն. Շահլամեանի ուժեղ ձայնը, նրա ընդունակութիւնները՝ վերցնել բարձր նոտաներ և հնչել որոտալից ձայնով, նուրբ, գեղեցիկ պիանիսիմօյով, ակնյայտնի է և տպաւորութիւն գործող, ինչպէս այդ եղաւ և չաթաթ երեկոյեան. բայց երգչի գնահատութեան համար դա բաւական չէ։

Ճշմարիտ է, պ. Շահլամեան իր ձայնով մեծ էֆեկտներ է առաջ բերում, բայց այն անձինք, որոնք գնահատում են երգեցողութիւնը նրա զանազան մասերի կատարեալ ներդաշնակութեամբ, որոնք ձայնի հետ ուզում են տեսնել և երգելու արհեստ, երաժշտականութիւն,—նրանք մնում են չը բաւականացած, և հէնց այդ կողմից մեր հնարալի տենօրը դեռ էլի կարօտ է կատարելագործութեան։ Մենք պ. Շահլամեանից աւելի ենք պահանջում այն պատճառով, որ ցանկանում ենք նրա մէջ տեսնել առաջնակարգ երգիչ։

Շաբաթ օր, կօնցերտի առաջին մասում, Շահլամեանի երգը թոյլ տպաւորութիւն թողեց. բայց երկրորդ մասում նա ոգևորվեց, և ստիպվեց շատ անգամ կրկնել մի քանի կտորներ։ Ի միջի այլոց երգիչը հայերէն երգեց «Հազար երանի», «Զայն տուր ով ծովակ». «Արաքսի արտասուքը» (դուէտ)։

Մեզ թվում է, որ հայերէն այնպիսի երգեր, ինչպէս օրինակ «Զայն տուր ով ծովակ», մի լուրջ երգիչ չը պէտք է երգէ այն եղանակով, ինչպէս որ դրանք ձայնագրված են։ Այդ եղանակների մէջ չը կայ ճաշակ։ Այդ ազգային կոչված երգերը բէպերտուարի մէջ պէտք է պահել միայն այն դէպքում, երբ նրանք կը ձայնագրվեն մի փոքր ճաշակով։

Օր. Ստրախօվա թէև մեծ ձայն չունի, բայց երգում է մեծ ճաշակով և այդ պատճառով զուարճութիւն պատճառեց լսողներին։

Տարաբաղդաբար, դահլիճը լի չէր։ Մենք կարծում էինք, որ հայ հասարակութիւնը աւելի սիրով կը վերաբերվի դէպի մեր երգիչը։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 4-ին

Այսօր, յունիսի 4-ին, Ղարաբաղի թեմական դպրոցում կայացաւ սարեկան հաշուետուութեան հանդէսը։ Մեր թեմի կառավարիչ Սմբատեան վարդապետը խօսեց մի քարոզ և բացատրելով թեմական դպրոցից սպասվող օգուտը, ցաւ յայտնեց, որ ժողովուրդը անտարբերութիւն է ցոյց տալիս դէպի դպրոցի հանդէսը և սառն է վերաբերվում դէպի ուսման գործը։ Շուշու հասարակութեան շատ յայտնի անդամները ներկայ չէին հանդիսին։

Տեսուչ Ե. Մաղաթեանը կարդաց մի երկար հաշիւ, լի անհեթեթ զրպարտութիւններով դէպի նախկին ուսուցչական խումբը։ Այս տարի 439 աշակերտներից սեմինարիական դասընթացքը աւարտել են վերջին դասարանում եղած երկու հոգի։ Երկու հոգի...

Մանաժողովի անդամ Խաչատրեանցը կարդաց տնտեսական մասի համառօտ հաշիւը, երգեցիկ խումբը երգեց մի քանի ազգային երգեր և դրանով էլ վերջացաւ հանդէսը։

Խ. Մալումեանի «Օրվայ հարցը», որ անդադար լոյս է տեսնում «Մշակի» համարներում, մեծ հետաքրքրութեամբ է կարդացվում այստեղ։

Աւագակալետ Նաբիի ասպատակխումբը մեծ աւերումներ է գործում Զանգեզուրում. ամբողջ գաւառը սարսափի մէջ է։

Այս տարի ամարանոց եկողներ մեզ մօտ համարեա թէ չը կան. այն ինչ անցած տարիներին քաղաքը լցված էր նորեկներով։ Այս տարի նոյն իսկ տները չեն վարձված։ Ինչին վերագրենք այս երևոյթը—չուշեցուց հրէշաւոր գներ պահանջելուն իրանց խարխուլ բնակարանների համար, հանքային ջրերը հասարակութեան համար այժմ մատչելի լինելուն, թէ հռչակաւոր «Թօփխանի» աղա-պարոնների անսանձ և անսպառ բամբասանքներին։

Իւրաքանչիւր ամառ բնութեան հետ արթնանում կենդանութիւն էր ստանում մեր քաղաքը, իսկ այժմ կարծես դեռ ձմեռվայ մեռած դրութեան մէջ ենք գտնվում։

Արցախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զենք սխալվի եթէ ասենք, որ Նեվայի քամին այնքան շուտ շուտ չէ փոխում իր ուղղութիւնը, որքան Պետերբուրգի մի քանի լրագիրները։ Այդպէս, օրինակ, «Новости» լրագիրը, որ մի քանի օր առաջ չանթեր էր արձակում Թիւրքիայի հասցէին, հրաւէր էր կարդում ռուսաց կառավարութեանը պաշտպանել Հայաստանի թշուառ քրիստոնեաներին, որ սպառնում էր Կ. Պոլսի պաշարումով, զէնքով,—այժմ, յանկարծ, իր դիրքը փոխեց, և մի առաջնորդողի մէջ այն կարծիքն է յայտնում, որ Ռուսաստանը ոչինչ կապ չունի հայոց հարցի հետ, որ հայոց հարցը ոչինչ կարևորութիւն չունի, և թող հայերը իրանք իրանց մասին մտածեն։ Պետերբուրգի լրագիրը այն տեղն է հասնում, որ առաջարկում է հայերին կաշառք տալ թիւրք փաշաներին, և այդպիսով լուծել հայոց հարցը։ Եւ այդ տեսակ մարդիկ երևակայում են, թէ իրանք կոչված են քաղաքակրթութեան և պետութեան ծառայելու։

—

Լսում ենք, որ Մոսկվայի հայ ուսանողների շրջանում միտք է ծագել՝ գրել այդ քաղաքի հայ ուսանողութեան քառասուն տարվայ պատմութիւնը։

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մտադրութիւն ունի նոր ուսուցչական խումբ կազմել գալ ուսումնական տարվայ համար։

—

Ժընեվի լրագիրները մատնանիշ անելով այն փաստի վրա, որ վերջին տարիները շատացել է այն կանանց թիւը, որոնք օտար երկիրներից գալիս են Շվեյցարիա, բարձրագոյն ուսում ստանալու, յայտնում են, որ նրանց մէջ իրանց թիւով աչքի են ընկնում և հայուհիները։

—

Լսում ենք, որ երաժիշտ խմբապետ Կարա-Մուրզա դիտաւորութիւն ունի կազմել մի երգեցիկ խումբ և ճանապարհորդել եւրօպական քաղաքներում, հայկական կօնցերտներ տալու նպատակով։ Այժմ, երբ եւրօպական հասարակութիւնը զբաղված է հայոց հարցով, շատ լաւ կը լինի, ի հարկէ, եւրօպացիներին ծանօթացնել հայոց երգեցողութեան և ժողովրդական երգերի հետ,—այդ պատճառով, ցանկալի է, որ Կարա-Մուրզայի այդ դիտաւորութիւնը իրագործվի։

—

Թիֆլիս քաղաքի առողջապահական հոգաբարձուներից մինը, որին բաժին էր ընկել Թիֆլիսի ամենալաւ մասի, Սօլօլակի այցելութիւնը, տպել է «Кавказъ» լրագրի մէջ մի նամակ, որի մէջ յայտնում է, թէ նա այցելել է աւելի քան 100 տներ, որոնց մէջ ապրում է Թիֆլիսի ոչ միայն դրամական, այլ և ցեղական արիստոկրատիան և սակայն մաքրութեան, առողջապահական պահանջների կողմից այդ տներից շատերը այնքան վատ, այնքան կեղտոտ է գտել, որ այդպիսի կեղտոտութիւն նոյն իսկ Հավաբարի տներում չէ կարելի տեսնել։ Մանաւանդ խոհանոցները և արտաքնոցները վերին աստիճանի կեղտոտ, առողջապահական պայմաններով չրջապատված են։ Այդ 100 տներից միայն 20-ի մէջ նա նկատել է մաքրութիւն։ Մարդ միայն զարմանում է, ասում է սանիտարական հոգաբարձուները, թէ բրօնզներով, թանգագին ծաղիկներով զարդարված նախասենեակ ունեցող հարուստները ինչպէս կարողանում են ուտել այն ճաշը, որ պատրաստվում է այնպիսի զզուելի և կեղտոտ խոհանոցներում, որտեղ ամեն քանից գարշահոտութիւն է փչում։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստր Երմօլով յուլիս ամսին պէտք է գնայ Սիբիր, ծանօթանալու այնտեղի հողային և անտառային գործերի հետ։ Մինիստրը Սիբիրում կը մնայ մօտ երկու ամիս։

—

Թիֆլիսի ոստիկանութիւնը գտել է այն յանդուգն գողութեան հետքերը, որը մի քանի օր առաջ կատարվեց Թիֆլիսի պօստ-հեռագրատան կից գրանսող խնայողական կասսայում, գողանալով մի քանի հազար ր.։ Յունիսի 8-ին ոստիկանութիւնը ձերբակալեց մի մարդու, Եղիա Դանիելեանին, որ իրան ցոյց է տուել իբրև պարսկահպատակ և նրա ընկերներ—Գէորգի Մուշկադիանի և գանձակեցի Ակոբ Ամիրէվին հէնց այն բօղէին, երբ նրանք պատրաստվում էին փախչել։ Նրանց դէմ զօրեղ ապացոյցներ կան, թէև գողացված փողը դեռ չէ գտնվել։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց բժիշկ Ս. Մարկի մի գրքոյկը «Ժողովրդական առողջարանների մասին (О народныхъ санаторіяхъ)։ Այդ առողջարանները մի տեսակ ամարանոցներ են թոքախտով հիւանդներին խնամելու և բժշկելու համար։ Այդպիսի առողջարաններ հիմնված են Եւրօպայի զանազան երկիրներում։ Հեղինակը առաջարկում է նոյնը հիմնարկել և Անդրկովկասում։

—

Վերջին օրերը համարեա անդադար անձրևներ է գալիս Թիֆլիսում և եղանակը մեր քաղաքում բոլորովին ամարային չէ։ Հասարակութիւնը դեռ չէ սկսել ցրվել դէպի ամարանոցները։

—

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են. «Յունիսի 3-ին Գանձասարից մեկ ուսուցիչ իր ընկերակիցներով գընում էր Աղդամ։ Ճանապարհին պատահում են մի խումբ զինաւորված մարդկանց, չէչէնների զգեստներով, թվով 16 հոգի։ Դրանցից մի քանիսը առանց ուշադրութիւն դարձնելու անցնում են. իսկ երեքը գալիս են ճանապարհորդների առաջները կտրում և հրամայում գրասանների բեռները թափել։ Գրասանների տէրերը դժուարութեամբ են կատարում առաջնորդների հրամանը. այդ ժամանակ նրանք սկսում են ծեծել ճանապարհորդներին։ Աւազակները, հանելով իրանց սրերը, կտրատում են բեռների չանները, բեռները թափում, կողոպտում ամեն բան և հեռանում։ Ինչպէս ասում են, այդ խմբի գլխաւորները փախած են աքսորից և նրանց անունն է Դալի Ալի և Սարը Մհարլամ։ Ճանապարհների երկիղը քանի գնում սաստկանում է։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ՃԱՌԸ

Համբուրգից, յունիսի 8-ից, ռուսաց գործակալութիւնը հեռագրում է մեզ հետևեալը.

«Քաղաքային տան մէջ եղած հանդիսաւոր ճաշին, Վիլհելմ կայսրը, պատասխանելով քաղաքագլխի ճառին, ասեց. «Ցարգելի քաղաքագլուխ. ես խորին կերպով յուզված եմ այն խօսքերից, որ իսկոյն լսեցի ձեզանից, և այն ընդունելութիւնից, որ ինձ ցոյց տուեց Համբուրգ քաղաքը։ Ես շատ քիչ եմ զգացել մի այդպիսի փառաւոր ընդունելութիւն։ Իմ այստեղ տեսած ոգևորութիւնը արտակարգ է։ Դրա մէջ չը կայ որ և է կեղծիքի հետքն անգամ։ Նման մրրկի բռնկման՝ ինձ պաշարեցին քաղաքի ցնծութիւնները։ Գիտեմ, որ ես չը պէտք է վերագրեմ այդ ուրախութիւնները անձնապէս ինձ, այլ պէտք է այդ համարեմ ամբողջ գերմանական ժողովրդի զգացմունքների արտայայտութիւն, որը ձգտում է տեսնել յանձին այստեղ, որպէս հիւրեր, գումարված գերմանական թագաւորների՝ գերմանական միացեալ կայսրութիւնը։ Այդ բոլորի համար ընդունեցէք իմ ամենաանկեղծ շնորհակալութիւնը և դրա թարգմանն եղէք Համբուրգ քաղաքի բնակիչների առաջ։ Մենք երկու ծովը միացրինք։ Դէպի ծովն են ուղղված մեր մտածմունքները։ Ծովը յափտենականութեան նշան է։ Ծովերը չեն անջատում,—ծովերը միացնում են։ Մենք ծովերը միացրինք նոր ճանապարհով՝ ազգերի բարօրութեան և խաղաղութեան համար։ Կիլի նաւահանգստում գումարված զրահակիր ծովային ոյժերը պէտք է լինեն նոյնպէս խաղաղութեան և բոլոր քաղաքակիրթ ազգերի համերաշխ գործողութեան նշան, որպէս զի եւրօպական կուլտուրան իր արժանաւոր բարձրութեան վրա մնայ։ Դարձնենք այժմ մեր ուշքը ժողովուրդների ծովի վրա։ Բոլոր ազգերի հայեացքները ներկայ րօպէում դարձրած են այստեղ հետևեալ հարցով. նրանք պահանջում են, ցանկանում են խաղաղութիւն։ Համաշխարհային առևտուրը կարող է զարգանալ և ծաղկել միայն խաղաղ ժամանակ։ Մենք խաղաղութիւն ենք ցանկանում և կը պահպանենք նրան։ Թող նա նպաստէ նոյնպէս Համբուրգի առևտրական գործունէութեանը»։

Կայսրի ճառը, որի մէջ կտրական կերպով ցանկութիւն է յայտնվում անչեղ հաւատարիմ մնալ խաղաղասէր քաղաքականութեանը, ամենախորը և ուրախ տպաւորութիւն գործեց։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, յունիսի 2-ին

Երէկ Բօստօնի հայերէն պատգամաւորութիւնը ներկայացաւ օր. Ալիս Սթօն Պլակուէլին՝ նրա տանը։ Ներկայ էին մի քանի նշանաւոր հայասէր ամերիկացիք և քաղաքիս հայ վաճառականներից ոմանք, հանդերձ ընտանեօք։ Պատգամաւորութիւնն հայասէր օրիորդին ներկայացուց քաղաքիս հայոց նուէրը—մի սենեկի ժամացոյց, քանդակեալ շրջանակով, որի վերին մասը հայկական զինանշանն կը ներկայացնէր։ Վարի մասին վրա հետևեալ հայերէն արձանագրութիւնն կար՝ «Առ օրիորդ Ալիս Սթօն Պլակուէլ, ի յիշատակ իբ մատուցած անգին ծառայութեանց ի նպաստ հայկական դատին»։

Հայոց կողմանէ խօսեցաւ Մ. Կ., մի քանի բառերով բացատրելով օրիորդին կատարած դերը Ամերիկայի մէջ՝ հայկական խնդրին հասարակաց տալն բերելու։ Օրիորդն, իր սեռին յատուկ համեստութեամբ, համառօտ շնորհակալութիւն մը յայտնեց։

Խօսեցան նաև ներկայ եղող ամերիկացի բարեկամաց ոմանք. Ուէլիամ Կէրիսըն ոտանաւոր մը կարդաց. ոգեորիչ ատենաբանութիւն մը ըրաւ «The Christian Register»-ի խմբագրուհին՝ միսիս Պարօղ։ Հայ երիտասարդ մը երգեց «Ծիծեռնակը» և մի քանի ուրիշ երգեր, ընդ որս և «Ցալորիկի կտրիճը»։

Օր. Պլակուէլ մին է այն հայասէր ամերիկացի-

ներէն, որք երկու տարիէ ի վեր ամեն կարելի ջանք կընեն օգնելու Արևելքի խարեն դարերէ ի վեր տառապող հայ ժողովրդեան։ Օրիորդը փոխնախագահն է «United Friende of Arménia»— Միացեալ բարեկամք Հայաստանի ընկերութեան, որոյ գործոց գլխաւոր վարիչն է եղեր։

Օրիորդին հայրը, ծերունազարդ Տր. Պլակուէլ, Ամերիկայի մէջ ի նպաստ հայկական դատին աշխատող կարող անձնաւորութեանց մին է։ Օր. Ալիս հայ երիտասարդի մը օգնութեամբ անգլիերէնի թարգմանած է Պատկանեանի, Նար-Պէյի, Դուրեանի և այլոց ընտիր գործերը։ Թարգմանութիւնները այնքան յաջող ու գեղեցիկ են, որ մեծ ուշադրութիւն գրաւած են գրական շրջաններու մէջ և պատճառ եղած են, որ շատեր հետաքրքրին հայոց անցեալ և ներկայ կեանքով։

Օրիորդը խմբագիր լինելով «The Woman's Journal» շաբաթաթերթին, իր կարող խմբագրականներով, իր սեռին և առհասարակ բաւական մեծ թիւով ամերիկացւոց ուշադրութիւնը գրաւած է հայոց պատմութեան և ներկայ դրութեան վրա։ Անկից զատ նա միշտ փութով պատասխանած է հայոց վրա գրված թշնամական յօդուածներու։ Ուսչինգթօնի թիւրքաց դեսպանը և իր կաշառած ամերիկացի գրողները չատ լաւ զգացեր են հայասէր գրագիտուհւոյն գրչի հարուածները։

Ի նպաստ հայկական դատին գումարեալ ժողովներու մէջ մեծ դեր կատարած է օր. Պլակուէլ, իբր ատենաբան։ Ամերիկացի ամենէն ընչանաւոր կին, ատենաբանաց միոյն դուստրը իր ժառանգած բոլոր տաղանդը ի գործ դրած է թշուառ ժողովրդեան մը աղետալի վիճակը և այլոց՝ մարդկութեան այդ մասին օգնելու անհրաժեշտ պարտականութիւնը բացատրելու։ Իր սուր դատողութիւնը, անկեղծ համոզումները, խարեն հմտութիւնը և անպարտելի տրամաբանութիւնը չատ համակիրներ գտած են մեր դատին։ Կարժէր որ ատենաբանութեանց մի քանին հայերէնի թարգմանվէին։

Բոստոնի հայերը երախտագիտական օրինակելի պարտք մը կատարեցին։ Եթէ մասնախումբը քիչ մը աւելի կանուխ գործի սկսելով՝ երգիչներու և ատենախօսի լաւագոյն ընտրութիւն մ'ըներ, այդ պարզ հանդէսը չատ աւելի խոր և հաճելի ազդեցութիւն պիտի թողուր ամենուն վրա։

Արմէն

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի։ Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա և Թագաժառանգ Ցէսարեվիչը յունիսի 7-ին ճանապարհ ընկան Աբասթումանից դէպի Բորժոմ։ Յունիսի 7-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան ճանապարհ ընկաւ Բորժոմից։ Թագաժառանգ Ցէսարեվիչը Մեծ Իշխան Նիկոլայ Սիխայլովիչի հետ միասին ճանապարհ գցեցին Նորին Մեծութիւնը մինչև կայարան։ Բաթումի հասնելուց յետոյ, Նորին Մեծութիւնը նստեց «Սենա» զրահակիր նաւը, որը 10 ժամին ուղևորվեց դէպի Օդէսա։

ՎԻԵՆՆԱ, 8 յունիսի։ Կայսրը ընդունեց Վինդիշգրեցի մինիստրութեան հրաժարականը։ Կոմս Կիլմանսեգ նշանակված է ներքին գործերի մինիստր և մինիստրների խորհրդի նախագահ։

ԿԻԵՎ, 8 յունիսի։ Այսօր, առաւօտեան 9 ժամին, «Պրինց Վլադիմար» նաւի վրա հաւաքվեցին բոլոր օտարահպատակ ժուրնալիստները։ Արտաքին գործերի վարչութեան ներկայացուցիչ Գոման դիմեց նրանց մի ճառով, որի մէջ, ի միջի այլոց ասեց. «Դուք, անկասկած, կը նայեք ձեր փորձված աչքով գործի վրա այնպէս, ինչպէս որ նա կայ և ինչպէս նա սկսված է,—այն ճառի ոգով, որ դուք լսեցիք երէկ Համբուրգում կայսրի բերանից, այն է՝ խաղաղաբեր կուլտուրական աշխատանքի ոգով։»

ԲՐՈՒՆՍԲԻՏՏԷԼ, 8 յունիսի։ Կայսերական «Հոհէնցոլէրն» նաւը, որի վրա գտնվում են կայսրը օգոստափառ հիւրերի հետ միասին, մտաւ 3 ժամ 45 րոպէին արևմտեան ջրկալի «шлюзъ» մէջ, որ զարդարված էր դրօշակներով և ծաղկամէջերով։ Ճիշդ 4 ժամին «Հոհէնցոլէրն» նաւը կարեց ջրանցքի միջով անցկացրած ժապաւէնը, և սկսվեց ընթացքը դէպի ջրանցքը։

ԷՆԴՍԲՈՒՐԳ, 8 յունիսի։ «Հոհէնցոլէրն» նաւը մտաւ ջրանցքը $3^1/_2$ ժամին։ Նրան հետևեցին 5 ժամի սկզբին «Kaiseradler» և ուրիշ նաւերը։ «Ավգուստա Վիկտորիա» նաւը դուրս եկաւ 5 ժամին Բրունսբիւտէլից։ «Հոհէնցոլէրն» նաւը անցաւ Էնդսբուրգի մօտ առաւօտեան 9 ժամ 10 րոպէին։ Նրան հետևում էր «Kaiseradler» նաւը, որի վրա գտնվում էին՝ Սաքսոնիայի թագաւորը, Վիրտէմբերգի թագաւորը, Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Բաղէնի, մեծ դուքսը և Բավարիայի խնամակալ-պրինցը։ Ադդաբնակութիւնը ողողված ցոյց էր անում կայսրին և նրա օգոստափառ հիւրերին։

ԲՈՒՐԳԴԻՏՄԱՐՇԷՆ, 8 յունիսին «Грозящій» նաւի անցնելու ժամանակ, ափի վրա կանգնած նաւագախումբը կատարեց «Ցէր, կեցո զկայսրն մեր» օրհներգը։

ՐԷՆԴՍԲՈՒՐԳ, 8 յունիսի։ Ֆրանսական «Surcouf» նաւին, ջրանցքով անցնելու ժամանակ, ողջունեցին մարսէլիեզով։ Ֆրանսական օֆիցէրները չնորհակալութիւնով էին պատասխանում այդ ցոյցին։

ԿԻԵՎ, 8 յունիսի։ $12^3/_4$ ժամին կայսրը «Հոհէնցոլէրն» նաւով հասաւ Գոլտէնաու, ուր պատասխան պահնակախումբ էր կանգնած։ Հենց որ «Հոհէնցոլէրն» անցաւ ջրկալը, «Կուրֆուրստ Ֆրիդրիխ-Վիլհելմ» նաւից թնդանօթաձգութիւն սկսվեց։ Նրանից յետոյ թնդանօթաձգութիւն սկսեցին և ուրիշ զինուորական նաւեր, երրակի «ուրայի» ողջունութեամբ։ Վաղը, «Festhalle»-ում տեղի ունենալի ճաշին կայսերական սեղանին հրաւիրված է ռուսաց մամուլի ներկայացուցիչ «Свѣтъ» լրագրի հրատարակիչ Վ. Կոմարով։

Կ. ՊՕԼԻՍ, 9 յունիսի։ Երեք պետութիւններին յանձնած յայտագրի մէջ Բ. Դուռը, մատնացոյց չանելով յատկապէս հայերի վրա, սկզբունքով ընդունում է բարենորոգումների անհրաժեշտութիւնը և խոստանում է նշանակել բարձրագոյն կոմիսար, մերժելով, սակայն, բարձրագոյն կոմիսար նշանակելու ժամանակ նախապէս պետութիւնների համաձայնութիւնը առնելու պահանջը։ Յայտագրի մնացած մասը խմբագրված է այնպիսի անորոշ խօսքերով, որ դեսպանները աւելի ճիշդ բացատրութիւններ պահանջեցին։ Այդ պահանջը վերաբերվում է գլխաւորապէս այն կէտերին, որոնց աւելի հիմնաւոր քննութիւնը ցանկանում է ինքն Բ. Դուռը։ Ռուսաստանի և Ֆրանսիայի մասնակցութիւնը Անգլիայի գործողութիւններին, որը Բ. Դրան առաջին պատասխանից յետոյ կասածելի էր թվում, այժմ կրկին հնարաւոր է համարվում։ Այնուամենայնիւ, յոյսը չեն կորցնում Բ. Դրան հետ համաձայնութիւն կայացնելու վրա, թէպէտ և, չատ կարելի է, դրա համար դեռ երկարատև բանակցութիւններ հարկաւոր կը լինեն։

ԿԻԵՎ, 9 (21) յունիսի։ Այսօրվայ ուշանասնութեան ժամանակ կայսերական կանցլերը զարդաց հետեւեալ գոկումենտը, որ յետոյ դրվեց հիմքի վերջին քարի տակ. «Այս գործը, որի հիմնական քարը դրեց 1887 թուի յունիսի 3-ին իմ օգոստափառ պապ Վիլհելմ I կայսրը և որի նպատակն էր՝ միացնել երկու գերմանական ծովերը, այժմ հասաւ մեզ՝ աւարտված կերպով։ Այդ ջրանցքը գերմանական աշխատասիրութեան և եռանդի պերճախօս ապացոյցը կը լինի։ Զատ մեզանց ուրախ զգացմունք է տիրում մեզ, երբ մտածում ենք, որ մենք տալիս ենք ջրանցքը համաշխարհային յարաբերութիւնների համար։ Մենք առանց որ և է նախանձոտ ցասկութեան զգացմունքի բաց ենք անում այդ ջրանցքը բոլոր ծովագնաց ազգերի համար և թոյլ ենք տալիս նրանց օգտվել այդ ջրանցքի բոլոր յարմարութիւններով։ Եւ թող միշտ ծառայէ խաղաղութեան այս գործը ազգերի խաղաղ մրցման համար միայն, նրանց մէջ տիրող անխառնով համաձայնութեան ժամանակ։

ԳՕԼՏԷՆԱՈՒ, 9 (21) յունիսի։ Հիմքի վերջին քարը դնելու ժամանակ, կայսրն ասեց. «Ի յիշատակ Վիլհելմ Մեծ կայսրի «Վիլհելմ կայսրի ջրանցք» անունն եմ տալիս սրան»։ Ապա կայսրը մուրճով երեք անգամ զարկեց և հանդիսաւոր կերպով արտասանեց. «Յանուն Տէր Աստուծու, ի փառս Վիլհելմ կայսրի, ի բարօրութիւն Գերմանիայի, յառաջադիմութիւն Ժողովուրդների։» $9^1/_2$ ժամին կայսրը այցելեց «Ռիւրիկ» նաւը և 10 ժամին վերադարձաւ «Հոհէնցոլէրն» նաւով։

ԼՕՆԴՕՆ, 10 յունիսի։ Համայնքների ժողովի նիստում Բրոդրիկ առաջարկեց 100 ֆունտ ստերլինգ պակասցնել զինուորական մինիստրի ռոճկից, որպէս բողոք ամունիցիայի և մանաւանդ նոր բաղադրութիւն ունեցող վառօդի պաշարների քչութեան դէմ։ Զինուորական մինիստրը պատասխանում է, որ զինուորական վարչութիւնը բաւարար պաշարներ ունի։ Անդիան կարող է ուղած ժամանակ 110,000 զինուորներ ասպարէզ դուրս բերել։ Նա մօտաւորապէս նոյնքան զօրք ունի ներքին պաշտպանութեան համար՝ թշնամու յարձակման դէպքում։ Բայի դրանից մնում է 171 հազար մարդ բերդերի պաշտպանութեան համար։ Այդ բոլոր զօրքերի համար պատերազմական մթերքների բաւարար պաշար կայ։ Զը նայելով այդ բացատրութիւններին, Բրոդրիկի առաջարկութիւնն ընդունվեց 132 ձայնով 125-ի դէմ։ Այդպիսով ստացվեց կառավարութեանը թշնամաբար վերաբերվող մեծամասնութիւն։ Իսկոյն, կառավարութեան պարտութիւն կրելուց յետոյ, մինիստրները խորհուրդ կազմեցին։ Զը նայելով այն բանին, որ ճգնաժամի պատճառը մի այնպիսի առաջարկութիւն էր, որ միայն երկրորդական նշանակութիւն ունէր, և որ քուէարկութեան հետևանքը միանգամայն անսպասելի էր մինչև անգամ դիմադրական կուսակցութեան համար, այն կարծիքն է գերակշռում, որ կառավարութիւնը, առանց յետադեղու, կը փակի պարլամենտական նստաշրջանը և կը լուծի պատգամաւորների ժողովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 12 յունիսի։ Լրագիրներին հեռագրում են, որ մի քանի մակեդոնական շրջաններում ապստամբութիւն բռնկեց թիւրքաց իշխանութիւնների դէմ։ Հրացանաձգութիւն տեղի ունեցաւ ապստամբների և թիւրքաց զօրքերի մէջ, որի ժամանակ սպանվեցին 8 ապստամբներ և 23 թիւրքաց զինուորներ։

ԼՕՆԴՕՆ, 12 յունիսի։ Բոզբերիի մինիստրութիւնը հրաժարական տուաց։ Նոր մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնված կը լինի Սալսբիւրիին։

—

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 9-ին

Լսնդոնի վրա 10 ֆունտ արժէ	92	»	95 »
Բերլինի վրա 100 մարկ —	45	»	35
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36	»	$77^5/_8$ »
Ոսկի — — արժէ	7	»	40
Մաքսային կուպոններ —	148	»	—
Արծաթ — — —	—	»	—
Բօրսային դիսկոնտ —	5	»	7%
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի	—	»	— »
— — — — 2-րդ	—	»	— »
— — — — 3-րդ	—	»	—
4% պետական բէնտա	99	»	75
5% ոսկեայ բէնտա 1894 թ	164	»	50
Արեւելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	—	»	— »
— — — 2-րդ —	—	»	— »
— — — 3-րդ —	—	»	— »
— — — 4-րդ —	—	»	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	235	»	50
— — երկրորդ —	223	»	—
5% պետական երկաթուղ. բէնտա	$101^7/_8$	»	—
4% Ներքին փոխառութեան	89	»	75
$4^1/_2$% Գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101	»	—
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. Գրաւ. թղթ. — —	205	»	50 »
$4^1/_2$% վկայակ. գլուղ. հող. բանկի.	101	»	—
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուտ.	—	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	151	»	— »
— — — թղթադ.	—	»	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ.	101	»	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100	»	75 »
Օդէսայի — —	100	»	— »
Թիֆլիսի — —	$99^5/_8$	»	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101	»	— »
— — Քութայիսի —	101	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ“

Վէպ Թիֆլիսի կեանքից

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՑԻ

ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ.

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև Կենտրօնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում։

(№ 64) 4—5

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԳՆԵԼ

ԶԻ (жеребецъ)

Արաբական, Զարաբաղի ցեղի, 4-ից մինչև 6 տարեկան։ Տալ բնդհանուր նկարագրութիւն, գոյնը և այլն, և գինը։ Կառապան Ֆրանց, Լաբօրատորնայա, 4, բաղում։

(№ 64) 3—5

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Հնարողներ
ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ
Զանազան գոյնի
Նորութիւն! առաջէտի ջուր
«Օ-ԴԸ ԲՐՕԿԱՐ»
ԶԳՈՅՇ ՊԷՏՔ Է ԼԻՆԵԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ
(ամ. 15. № 67) 1—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQET ET COMP.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ։ Չորեքշաբթի, յունիսի 14—26-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ շոգենաւ, կապիտան ԺԻԲՈՒԷՆ, և այլն, երկու շաբաթը մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։

Տոմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գներից պակասեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագէնտներին, ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ Գ. Օ. Գ. Պարէնգէնտանու, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա, ԲԱԳՈՒ պ. Սամուէլ Դիլդարովին, Կոլիւբակինսկայա հրապարակ, Նովոբոսիսկում պ. Լուի Բէնօ։

(№ 64) 3—5

ՆԿԱՐՈՒՄ ԵՄ

Ատլասի վրա ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ԲԱՖՖԻԻ պատկերները և զանազան տեսարաններ՝ բազմոցի բարձի երեսի համար՝ 3—5 ր., լուսամփոփի մեջը տաքսեայ կտորների վրա նկարված 6 հայ գործիչների պատկերներով 3 ր., մետաքսեայ Թաշկինակներ յայտնի հայ գործիչներով 60 կ.—1 ր., ժապաւէններ (գրքանշան) վերոյիշեալ պատկերներով 20, 25, 30 կօպէկ։ Ցանկացողները կարող են ստանալ ինձանից։
Հասցէն. Малая Ванкская у. д. Мурадова № 7. А. Родіоновой. (№ 65) 3—6

ԱԶԴ

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ համար հարկաւոր է տեսուչ, որ պէտք է աւանդէ շաբաթական 12 դաս։ Ցանկացողները թող բարեհաճեն յայտնել իրանց պայմանները հոգաբարձութեան մինչև յունիսի 15-ը։
2—3 (№ 64) Անդամ հոգաբարձութեան՝ Գ. ՏԷՐ-ԹԱՔԱՏՐԵԱՆՑ

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Іюня 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.